



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

## Հ Ր Ա Մ Ա Ն

19 հունիսի 2020 թվականի N 194 -Ա


**ՍՈՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ  
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ  
(ԾԱԾԿԱԳԻՐ՝ 97-2-Ղ5-2) ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշմամբ հաստատված կարգի 151-րդ կետով, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնի պետի (ծածկագիր՝ 97-2-Ղ5-2) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հարցազրույց անցկացնող հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 18-ի եզրակացությունը և Ս.Թումանյանի դիմումը՝

### հ ր ա մ ա յ ու մ եմ.

1. 2020 թվականի հունիսի 22-ից Սոս Թումանյանի նշանակել Սյունիքի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնի պետի (ծածկագիր՝ 97-2-Ղ5-2) պաշտոնում՝ 12 ամիս փորձաշրջանով:
2. Սոս Թումանյանի փորձաշրջանի համակարգող նշանակել մարզպետարանի քարտուղարության ընդհանուր բաժնի բաժնի պետ (ծածկագիր՝ 97-2-Ղ5-1) Անահիտ Վանյանին:
3. Աշխատավարձը՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով:

6/19/2020



**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ** **ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2020թ. հունիսի 19  
ք. Կապան